ՀՏԴ : 929 : 809.198.1(479.25) Կատվալյան
DOI: 10.54503/0135-0536-2026.2-297

# ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(Ծննդյան 65-ամյակի առթիվ)*

Լրացավ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Լիպարիտի Կատվալյանի ծննդյան 65-ամյակը:

Վ. Կատվալյանը ծնվել է 1961 թ. հուլիսի 10-ին Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: Սովորել է հայրենի գյուղի դպրոցում, 1984 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի (այսուհետև՝ ԵՊՀ) բանասիրական ֆակուլտետը: 1984–1987 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: Երկար տարիներ աշխատել է այդ ինստիտուտում նախ իբրև կրտսեր գիտաշխատող, ապա՝ գիտաշխատող:

1991 թ. ակադեմիկոս Գ. Ջահուկյանի ղեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հնչյունների համակցական փոփոխությունները ժամանակակից հայերենում» թեմայով, և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1993 թ. դասախոսում է Գավառի պետական համալսարանում: 1998 թ. եղել է նույն համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, 2004–2012 թթ.՝ բանասիրական ֆակուլտետի դեկան:

2012 թ. կրկին աշխատանքի է անցել Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում իբրև ավագ գիտաշխատող, նույն տարում էլ ընտրվել է ինստիտուտի տնօրեն:

2011–2024 թթ. դասավանդել է Սբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, 2025-ից դասավանդում է ԵՊՀ-ում:

2016 թ. Վ. Կատվալյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ» թեմայով՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Լեզվաբանի գիտական հետաքրքրությունները բավական ընդարձակ են. ընդգրկում են հայերենագիտության տարբեր բաժինները: Հեղինակ է 16 մենագրության և 100-ից ավելի հոդվածների, այդ թվում տարբեր երկրներում

* Ներկայացվել է 05. VI. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

(Ռուսաստանի Դաշնություն, Իսպանիա, Կանադա, Վրաստան) հրատարակված Scopus և Veb of Science գիտաչափական համակարգերի համար ընդունելի գիտական հանդեսներում: Դրանք վերաբերում են բարբառագիտությանը, հայոց լեզվի պատմությանը, ժամանակակից հայերենին, ընդհանուր լեզվաբանությանը, բառարանագրությանը, արևմտահայերենի և արդի լեզվաքաղաքականության խնդիրներին:

Վ. Կատվալյանը մի շարք հեղինակավոր հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ է: Գիտնական-մանկավարժը հեղինակ է դպրոցական ուսումնամեթոդական ձեռնարկների: Նրա գիտական խմբագրությամբ հրատարակվել են ավագ դպրոցի հայոց լեզվի դասագրքեր: Հատկանշական է Վ. Կատվալյանի՝ «Ուղղագրական և կետադրական ուղեցույցը» (1992), որը երկար տարիներ ուսուցիչների և աշակերտների սեղանի գիրք է եղել:

Գիտական հետաքրքրությունների հզոր երակը, սակայն, բարբառագիտությունն է, որը, ինչ խոսք, նրան հոգեհարազատ է: Վ. Կատվալյանը բարբառագիտական իր հետազոտություններն սկսել է հայրենի Բայազետի բարբառի հնչյունական, քերականական և բառապաշարային իրողությունների ուսումնասիրությամբ, որի արդյունքներն ամփոփված են «Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ» (2016) մենագրության մեջ: Աշխատության մեջ ոչ միայն առաջին անգամ ամբողջականորեն հետազոտվում ու նկարագրվում է Բայազետի բարբառը, այլ նաև լեզվական իրողությունները դիտարկվում են շրջակա Մուշի, Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի և Արարատյան բարբառների հետ համեմատություններով, ինչը առավել հավաստի է դարձնում երևույթների մեկնաբանությունները: Վ. Կատվալյանն ի հայտ է բերել և մեկնաբանել Բայազետի բարբառում շրթնայնացած *ա* հնչյունի դրսևորման օրինաչափությունը և սահմանել հնչյունական օրենք («Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը». – «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2012, 2, էջ 48–64): Բարբառային, ապա և խոսակցական հայերենում էական բայի եզակի երրորդ դեմքի ա տարբերակի առաջացման վերաբերյալ առաջ է քաշել իր վարկածը («Եմ» բայը Բայազետի բարբառում. – «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի. հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», 2012, 2, էջ 94–99): Դիտարկել է բարբառային լեզվում հարացուցային հնաբանությունների մեկնաբանման խնդիրը (Հարացուցային հնաբանությունները բարբառային հայերենում. – Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2019, էջ 78–87), քննել է արդի բարբառներում հինհայերենյան ու միջինհայերենյան իրողությունների մեկնաբանման տարբեր հարցեր:

Վ. Կատվալյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում ներկայում գործածվող բարբառային միավորների տարածական ընդգրկումները, կրողների մոտավոր քանակը (Բարբառային հայերենը Հայաստանի Հանրապետությունում. – Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա, Զեկույցներ, 2024, 1 (124), էջ 67–86): Անդրադարձել է Ֆր. Ռիվոլայի բառարանում ազգերին ու երկրներին վերաբերող բառապաշարին (Katvaljan V. L., Gharibyan

A. A., Hovhannisyan N. G., Vardanyan A. V., Mkhitaryan G. M. Rivola's Baragirk'Hayoc'. Dictionarium Armeno-Latinum (1621). An Analysis of Vocabulary Related to Nations and Countries in the First Printed Armenian Dictionary. – "Lexocography" (Toronto), V. 12, Iss. 2, 2025, pp. 53–73), բարբառային նյութի քննություն է կատարել ճանաչողական լեզվաբանության մեթոդներով (Katvalyan V., Gharibyan A., Hovhannisyan N., Mkhitaryan G. Analysis of gender differences in the vocabulary of dialectal Armenian. – "Dialectologia" (Barcelona), V. 35, 2025, pp. 109–131; Katvalyan V., Khachatryan H., Barnasyan J., Gharibyan A., Hodgson C., Kumunts M. Domestic Animals in Armenian Proverbs: A Cognitive Approach. – "Etnografia" (Saint-Petersburg), V. 3, 2025, pp. 62–185): Տարբեր դիտակետերից հետազոտել և ընդհանուր գծերով նկարագրել է մի շարք բարբառային միավորներ (Վանի, Սասունի, Կարնո, Հադրութի, Շամախիի բարբառներ, Երևանի, Մակուի, Խուռնավուլի, Կարբիի, Փարպիի, Սուրմալուի, Լոռու խոսվածքներ):

Հետաքրքրական անդրադարձումներ է կատարել տարբեր հեղինակների՝ բարբառներին և դրանց ուսումնասիրությանն առնչվող աշխատանքներին (Ղ. Ալիշան, Գ. Սրվանձտյանց, Հ. Աճառյան, Մ. Աբեղյան, Գ. Ղափանցյան, Է. Աղայան, Մ. Ասատրյան):

Վ. Կատվալյանը 2013 թ. նախաձեռնել է «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» գովարժան ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում բարբառային միավորների և հատկանիշների տարածման արդի պատկերի ճշգրտումը, երկրի բարբառային քարտեզի կազմումը և ամբողջացումը:

Վ. Կատվալյանը գրասենյակային գիտնական չէ: ՀՀ գիտության կոմիտեի դրամաշնորհային ծրագրերի շրջանակում իր ղեկավարած խմբով երկամյա փուլերով դաշտային աշխատանքներ է կատարել Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի մարզերում, ներկայում հետազոտվում են Լոռու մարզի բնակավայրերի խոսվածքները: Հավաքչական բարբառային նյութերի մշակմամբ ստացված արդյունքներն ամփոփված են Վ. Կատվալյանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ» (2018) և «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ» (2020) աշխատություններում: Սույն ուսումնասիրություններում առանձին-առանձին ներկայացված են Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի բնակավայրերի լեզվական բնութագրերը՝ համալրված բառացանկերով և քաղաբերված բարբառային նմուշօրինակներով, ժողովրդագրական տեղեկություններով. ձևավորվել է գործածվող բարբառային հատկանիշների և բարբառային միավորների տարածման համապատկերը:

Վ. Կատվալյանը 2025 թ. նախաձեռնել է «Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս» նախագծի իրականացումը՝ նպատակ ունենալով հաջորդաբար ձևավորել ՀՀ մարզերից յուրաքանչյուրին վերաբերող առանձին ատլասներ, ապա և՝ ընդհանրական ատլաս: Առցանց հարթակում հրապարակվել է բարբառագետի «Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս, Պրակ Ա., Գեղարքունիքի մարզ» աշխատությունը (2025, 325 էջ):

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

Հայ իրականության մեջ առաջին անգամ առանձին մարզում բարբառային հատկանիշների տարածումը քարտեզներով ներկայացնող սույն ատլասը պարունակում է 2 ընդհանուր և 65 զուգաբանական քարտեզներ, որոնք ընդգրկում են Գեղարքունիքի մարզի շուրջ ինը տասնյակ բնակավայրեր: Ատլասի՝ զուգաբանություններ ներկայացնող բոլոր քարտեզներն ունեն մեկնաբանություններ՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Ատլասը համալրված է նաև ժողովրդագրական տեղեկություններով, մարզի բնակավայրերից յուրաքանչյուրի բնակչության թվաքանակն արտացոլող աղյուսակով, բարբառային միավորների տարածական ընդգրկումը ներկայացնող տեղեկույթով: Առանձին աղյուսակում զուգաբանությունների և դրանց տարբերակային դրսևորումների համարակալումով ներկայացվում է բնակավայրերից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշների խումբը: Ատլասը եզրափակվում է մարզում գործածվող բարբառային միավորների ընդհանուր բնութագրերի և դրսևորումների ներկայացումով, զուգաբանությունների և քարտեզների ցանկով:

Այս հսկայածավալ աշխատանքը շարունակական է, և առաջիկայում գիտական հանրությունն սպասում է հայրենասեր լեզվաբանի հարանոր արարումների:

Վ. Կատվալյանն ընտանիքին նվիրված անձնավորություն է, երկու զավակի հայր, երեք թոռան պապ: Ստեղծագործական վերելքներ մաղթենք մեր ժամանակների վաստակաշատ հայագետ-մանկավարժին, ցանկանք քաջառողջություն և արևշատություն:

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

*Բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, Սբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ մշակութային ժառանգություն, տեքստի ոճաբանություն և խոսքի զարգացման հիմնախնդիրներ, հաղորդակցական իրավիճակների մեթոդաբանություն: Հեղինակ է 4, համահեղինակ 10 գրքի և շուրջ 150 հոդվածի: ORCID: 0000-0001-9506-8611. galstyanashot42@aspu.am*